



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, Էլ.փոստ kotayk@mta.gov.am

Ուղերձ

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն առաջին անգամ անցկացվեցին 1996 թվականի նոյեմբերի 10-ին: Այսօր լրանում է ՏԻՄ-երի ձևավորման 22 տարին, ինչի առիթով ուզում եմ շնորհավորել համայնքային ծառայողներին, մաղթել նրանց լավագույնը՝ համայնքների զարգացմանն ուղղված աշխատանքի իրականացման ճանապարհին:

Համայնքների զարգացման կարևորագույն նախապայմաններից մեկը կայուն, հզոր ներուժով ՏԻՄ մարմինների առկայությունն է, քանի որ այն կառավարման առանձին և ինքնուրույն օղակ է: Մենք տևական ժամանակ, գուցե նույնիսկ տարիներ շարունակ իրապես չենք գնահատել տեղական ինքնակառավարման և համայնքների անկախության կարևորությունը, այնինչ իրական ժողովրդավարության հաստատման, համայնքների զարգացման մեր տեսլականն անքակտելիորեն կապված է հենց այս կառույցների արդյունավետ աշխատանքի հետ:

Կարևորելով համայնքների համաչափ զարգացումը և ՏԻՄ-երի արդյունավետ աշխատանքը՝ համատեղ ջանքերով անհրաժեշտ է հասնել փոխգործակցության այն մակարդակին, որը նոր ձեռքբերումների երաշխիքը կլինի, քանի որ հզոր համայնքները պետականության ամրապնդման հիմքերն են:

Հարգանքով՝

Ռոմանոս Պետրոսյան

10.11.2018